Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 40

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բաղալյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Ներսիսյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 163-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
5. Վարդգես Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի կառուցման վերաբերյալ համաձայնություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
6. Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:
/Զեկուցող՝ Է. Փարվանյան/

7. Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկան վարձակալությամբ տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Ատոմյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Ատոմյան/

9. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Արտաշավան, Ղազարավան և Տեղեր բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

10. Աշտարակ համայնքի Օշական և Նոր Երզնկա բնակավայրերում փողոցի, փակուղիների և նրբանցքների համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

12. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նկատմամբ սերվիտուտ սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

14. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Ա. Խաչատրյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 163-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու

11.12.2023թ. N 163-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և Աշտարակ համայնքի 2024թ.-ի տարեկան բյուջեի 1-6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

/հազ. դրամ/

	Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե	Ընդամենը
Եկամտային մաս	4349212.4	2750000.0	6199212.4
Ծախսային մաս	4361616.1	3220720.4	6682336.5
Դեֆիցիտ	- 12403.7	- 470720.4	- 483124.1
Պահուստային ֆոնդ	900000.0	0	900000.0

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Ա. Խաչատրյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով 2024թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի 2024թ. տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցներից 900 մլն դրամի չափով ուղղել ֆոնդային բյուջե՝ 04-5-1 բնագավառում առաջացած ծախսերի ֆինանսավորման համար:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Ա. Խաչատրյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38 հոդվածի առաջին մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35/1

հոդվածի պահանջներով, ի գիտություն ընդունել 2024 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը.

	Վարչական բյուջե	*Ֆոնդային բյուջե*	*Ընդամենը*
Եկամտային մաս	2080341.9	77930.8	2158272.7
Ծախսային մաս	1381156.7	487913.6	1869070.3

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Ա. Խաչատրյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - Վարդգես Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի կառուցման վերաբերյալ համաձայնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Աշտարակ քաղաքում իրականացված Վ. Պետրոսյանի անվ. հիմն. դպրոցի կառուցման աշխատանքների վերաբերյալ հանրային լսման արդյունքը, ղեկավարվելով <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման պահանջներով, նախնական համաձայնություն տալ Աշտարակ քաղաքում 1000 աշակերտի համար Վարդգես Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի կառուցման աշխատանքներին:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ Է. Փարվանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Հայկ Ավետիսյանի 04.06.2024թ. թիվ 6157 դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Օշական գյուղի Նալբանդյան փողոցի թիվ 46/1 տան բնակիչ, զոհված զինծառայող Մարտին Ավետիսյանի հայր Հայկ

Ավետիսյանին ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու նպատակով 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկան վարձակալությամբ տրամադրելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Ատոմյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Արագածոտն մարզի Ղազարավան գյուղի բնակիչ Արմեն Կարոյի Արշակյանի 10.07.2024թ. թիվ 7719 դիմումը, համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկան՝

- Անիվավոր տրակտոր <<Բելառուս 82.1>>
- Խոտի հավաքիչ հակավորիչ ТУКАН -1600
- Այգեգործական թունաքիմիկատների սրսկիչ /ԱԳՊ/
- Եռախոփ գութան ՊՆՎ 3-35,

Արմեն Կարոյի Արշակյանին տարեկան 600 000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Աշտարակի համայնքապետարանի և Արմեն Կարոյի Արշակյանի միջև կնքել վարձակալության պայմանագիր՝ 2 տարի ժամկետով:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների

աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Ատոմյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի /ՀՏԶՀ/ կողմից իրականացված <<Կոմունալ ծառայությունների բարելավում>> ծրագրի շրջանակներում ձեռք բերված 2 հատ MAZ մակնիշի 586 CZ 61 (VIN X5H806205R0000258) և 585 CZ 61 (VIN X5H823205R0000026) պետհամարանիշների բազմաֆունկցիոնալ քաղաքային կոմունալ մեքենաները <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Համաձայնություն տալ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի /ՀՏԶՀ/ կողմից իրականացված <<Կոմունալ ծառայությունների բարելավում>> ծրագրի շրջանակներում ձեռք բերված 3 հատ MAZ մակնիշի 595 CZ 61 (VIN X5H456165R0000020), 594 CZ 61 (VIN X5H456165R0000019) և 596 CZ 61 (VIN X5H456165R0000018) պետհամարանիշների աղբատար մեքենաները <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 9</u> - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Արտաշավան, Ղազարավան և Տեղեր բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 31.05.2024թ. N 2/փ-236, 14.06.2024թ. N 2/փ-254, 24.06.2024թ. N 2/փ-260, 28.06.2024թ. N 2/փ-268 և N 2/փ-274, 02.07.2024թ. N 2/փ-276 դրական եզրակացությունները՝ Աշտարակ քաղաքում, Արտաշավան, Ղազարավան և Տեղեր բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության

29.12.2011թ. N 1920-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-020-0101-0006 ծածկագրով 0,2հա մակերեսով հողամասից 0,07228հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

2. Հաստատել Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 02-068-0420-0004 ծածկագրով 0,3595հա մակերեսով հողամասից 0,05հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

3. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-001-0324-0128 ծածկագրով 0,2հա հողամասի /կորիզավոր/ նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

4. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-001-0662-0021 ծածկագրով 0,4703հա արոտավայրի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

5. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-001-0379-0003 ծածկագրով 0,3659հա այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

6. Հաստատել Աշտարակ համայնքի Տեղեր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 02-106-0027-0001 ծածկագրից 0,002հա մակերեսով բնակավայրերի հողեր նպատակային նշանակության այլ հողամասի

նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության էներգետիկայի հողեր գործառնական նշանակության փոփոխությունը:

7. Բոլոր կետերում նշված փոփոխությունները սահմանված կարգով արտացոլել Աշտարակ համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում, Աշտարակ քաղաքի, Արտաշավան, Ղազարավան և Տեղեր բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մաթևոսյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - Աշտարակ համայնքի Օշական և Նոր Երզնկա բնակավայրերում փողոցի, փակուղիների և նրբանցքների համարակալման մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N2387-Ն որոշման պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Ձախ ափի փողոցի 2-րդ նրբանցքից սկիզբ առնող փակուղուն տալ 2 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Ձախ ափի փողոց, 2-րդ նրբանցք, 2-րդ փակուղի:

2. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Ձախ ափի փողոցի 2-րդ նրբանցքից սկիզբ առնող փակուղուն տալ 3 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Ձախ ափի փողոց, 2-րդ նրբանցք, 3-րդ փակուղի:

3. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրում նոր փողոցին տալ 41 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 41-րդ փողոց:

4. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 41-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 41-րդ փողոց, 1-ին նրբանցք:

5. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 41-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 2 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 41-րդ փողոց, 2-րդ նրբանցք:

6. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 41-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 3 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 41-րդ փողոց, 3-րդ նրբանցք:

7. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 41-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 4 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 41-րդ փողոց, 4-րդ նրբանցք:

8. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 41-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 5 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 41-րդ փողոց, 5-րդ նրբանցք:

9. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 41-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 7 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 41-րդ փողոց, 7-րդ նրբանցք:

10. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 41-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 9 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 41-րդ փողոց, 9-րդ նրբանցք:

11. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 41-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 11 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 41-րդ փողոց, 11-րդ նրբանցք:

12. Օշական և Նոր Երզնկա բնակավայրերի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

21 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 11</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Էդիկ Ղալաչյանի 29.05.2024թ. N 5861, Եղիսաբեթ Ալնազյանի 21.06.2024թ. N 6985, Հովհաննես Կարապետյանի 21.06.2024թ. N 6984 և Հրայր Քէօրօղլեանի 24.06.2024թ. N7019 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի

Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Գ. Նարեկացու փողոց, N 128/2 հասցեում գտնվող, 02-001-0859-0663 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 7,6քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0859-0621 ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի սեփականատեր Էդիկ Նորիկի Ղալաչյանին:

2. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մուղնի, 5-րդ թաղամաս, N 61/2 հասցեում գտնվող, 02-001-0361-0429 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 131քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքի 200%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02-001-0361-0023 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Եղիսաբեթ Սամվելի Ալմազյանին:

3. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մուղնի, 5-րդ թաղամաս, N 69/1 հասցեում գտնվող, 02-001-0361-0428 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 125,4քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքի 200%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02-001-0361-0414 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի համասեփականատերեր Հովհաննես Գրիշայի Կարապետյանին և Լիլիթ Այվազի Անտոնյանին:

4. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մուղնի, 6-րդ թաղամաս, N 96/1 հասցեում գտնվող, 02-001-0364-0122 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 594քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 6 000 000 /վեց միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0364-0051 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Հրայր Գեղամի Քէօրօղլեանին:

5. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մուղնի, 6-րդ թաղամաս, N 96/2 հասցեում գտնվող, 02-001-0736-0024 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 308քմ հատուկ պահպանվող տարածքների հողեր նպատակային

նշանակության հանգստի համար նախատեսված հողամասը ուղղակի վաճառքով՝ 3 000 000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0364-0050 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Հրայր Գեղամի Քէօրօղլեանին:

6. Աշտարակ համայնքի Տեղեր բնակավայրի 02-106-0027-0001 ծածկագրից, համայնքային սեփականություն հանդիսացող 20քմ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության էներգետիկայի գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով՝ կադաստրային արժեքով օտարել <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ին՝ տրանսֆորմատորային ենթակայան կառուցելու նպատակով:

21 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 12</u> - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Վազգեն Ղարիբյանի 29.05.2024թ. N 5868, <<ՂԱԼԱ>> ՍՊԸ-ի լիազորված անձ Մոհամադ Թալսինի 19.06.2024թ. N 6872, Անի Ավետիսյանի 01.07.2024թ. N 7337, Վարսիկ Մկրտչյանի 01.07.2024թ. N 7336, Արայիկ Շանոյանի 02.07.2024թ. N 7379, Վահան Վահանյանի 04.07.2024թ. N 7523, Գագիկ Եղիազարյանի 10.07.2024թ. N 7692 և <<ԳՐԻՆ ԳՈՒԴՍ>> ՍՊԸ-ի լիազորված անձ Վահե Խաչատրյանի 11.07.2024թ. N 7736՝ ջրային և արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով.

1. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0231-0022 ծածկագրով, Վազգեն Վարդանի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող 0,1413հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ

գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 07-050-0107-0135 ծածկագրով, <<ՂԱԼԱ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,55հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /այլ հողատեսք և վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /չորանոցի և պարսպի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0753-0001 ծածկագրով, Անի Գևորգի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,80704հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

4. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0234-0001 ծածկագրով, Վարսիկ Ժիրայրի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող 0,1154հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

5. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 07-050-0134-0021 ծածկագրով, Արայիկ Ալբերտի Շանոյանին սեփականության իրավունքով պատկանող 0,0847հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /խաղող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային

տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

6. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի 07-050-0114-0106 ծածկագրով, Վահան Հայկասարի Վահանյանի սեփականությունը հանդիսացող 0,4հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /վարելահող և այլ հողատեսք/ նպատակային նշանակությունը ջրային հողեր նպատակային նշանակության՝ /ոռոգման նպատակով ջրավազանի և պոմպակայանի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

7. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0276-0003 ծածկագրով, Գագիկ Զալիբեկի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող 0,22հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

8. Հավանություն տալ Աշտարակ համայնքի ՈՒշի բնակավայրի 02-108-0265-0010 ծածկագրով, <<ԳՐԻՆ ԳՈՒԴՍ>> ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող 21,7262հա մակերեսով հողամասից 5,07հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը ջրային հողեր նպատակային նշանակության՝ /ոռոգման նպատակով ջրավազանի և պոմպակայանի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

21 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 13</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նկատմամբ սերվիտուտ սահմանելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Ագրոպրո>> ՓԲԸ-ի տնօրեն Կարեն Սարգսյանի 24.06.2024թ. N7027 դիմումը՝ ճանապարհ կառուցելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից սահմանափակ օգտվելու իրավունք /սերվիտուտ/

տրամադրելու մասին, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-217 հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 1,43016հա ընդհանուր մակերեսով 13 միավոր գյուղատնտեսական նշանակության հողամասերից <<Ագրոպրո>> ՓԲԸ-ին ճանապարհ կառուցելու նպատակով, անվճար, մշտական սահմանափակ օգտվելու իրավունք /սերվիտուտ/ տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ պայմանով, որ նախատեսվող ճանապարհից կարող են օգտվել նաև հարևան բոլոր հողօգտագործողները:

2. Հաստատել սերվիտուտով ծանրաբեռնված հողամասերի ցանկն ու հատակագիծը:

21 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 14</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

21 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2024 թվականի հուլիսի 18-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ	_____
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ	_____
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ	_____
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ԱԶԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ	_____
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ	_____
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ